

Թիւ 11837  
Մարտ 19, 1965

Արժանաշնորհ  
Տ. արդան ՌՀՆՅ. Տ. Աստուերեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Հուս. Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Ծխական Խորհուրդի  
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Վարդան,

Ստացած ենք Ձեր Մարտ 17 թուակիր նամակը, որով կը տեղեկացնէիք  
թէ Ձեր համայնքի Տարեկան Ծխական ժողովը որոշած է դրամատան մէջ ունե-  
ցած Պահեստի դրամէն 7000.00 տուարի գումար մը գործածել եկեղեցւոյ  
նորոգութեան համար, եւ կը խնդրէիք մեր արտօնութիւնը:

Այսու, նկատի ունենալով Ձեր եկեղեցւոյ շէնքի նորոգութեան կա-  
րեւորութիւնը, կարտօնենք զՁեզ եւ Պատուարժան Ծխական Խորհուրդը, գոր-  
ծադրել Տարեկան Ծխական ժողովի վերոյիշեալ որոշումը:

Մաղթելով Ձեզի յաջողութիւն եւ Աստուծոյ օրհնութիւնները.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի

ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN APOSTOLIC CHURCH

MAIN STREET  
HAVERHILL, MASSACHUSETTS

DRake 4-9778

Մարտ 17, 1965

Բարձրաշնորհ,  
Տ Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի  
Նիւ-Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Տարեկան Եխական Ժողովը որ գումարուած էր Փետրուար 7, 1965 ին, որոշում  
տուած էր որ դրամատան մէջ մեր ունեցած Պահեստի գրամէն 7000.00 տուարի գումար մը  
գործածուէր եկեղեցւոյ նորոգութեան համար:

Կը յուսանք թէ մօտ ատենէն պիտի կրնանք նորոգութեան գործին սկսիլ:

Այսու կը խնդրենք Ձեր արտօնութիւնը վերոյիշեալին համար:

Մնամ որդիական ակնածանօք եւ մատչեւով ի համբոյր Ձեր Ս Աջոյն,

Վարդան ԲՏՆՅ.Տ Ասատուրեան

— *արքեպիսկոպոս*

*Արքեպիսկոպոս*



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANGOGIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

**Էրժեւոշեօրհ  
Տ. Գորենիկ Քհնյ. Գոնարալեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Ստեօգոհ սրբական Խորհրդրդի  
Հէյվըրհիւ.**

**Սիրելի Տէր Գորենիկ,**

Նորոգ Գանձուցեալ Հայկ Գավուրքեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարեկան Օգոստոսին: Եւրջ քառասունըհինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցիին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրագործումներուն ամենէն գեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ Եորք քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուրքեան իր կեանքի մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ձգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուրքեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

- |                           |                     |
|---------------------------|---------------------|
| Տիար Տատուր Տատուրեան     | Ատենապետ            |
| Տիար Սուրէն ֆէսմեան       | Գանձապահ            |
| Տիար Եղուարդ Պաշեան       | Բ. Գանձապահ         |
| Տ. Գառնիկ Քհնյ. Հալլամեան | Քարտուղար           |
| Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան  | Բ. Քարտուղար        |
| Տիար Բիչըրտ Գ. Կրէկըրի    | Օրինական Խորհրդատու |

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուրքեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն զործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուրքեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տուար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տուար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուրժեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տուար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տուար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.


1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուրժեանի հոգևոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Յունիս 5էն մինչեւ Յունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները համեմատել մեզի դրկել մինչեւ Յունիս 16: Եթէ փախքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգիստէն յետոյ մատաղի ծաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Ձեր համայնքին մէջ համեմատել գտնել 50 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փախքի 102-ական տուար նուիրել Հայկ Գավուրժեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Աեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանձութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով մանչցուած Հայկ Գավուրժեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՂՈՍԿՈՎՈՍ

Առաջնորդ